

# ՀՈՒՇԱԹԵՐԹ ՊԱՅԻԵՆՏԻ ՀԱՄԱՐ

Հուշաթերթը նախատեսված է բացառապես այն պացիենտների համար,  
որոնք բժշկի ցուցումով ստանում են ռիվարոքսաբան (Քսիլտեսս 2,5 մգ, 10  
մգ, 15 մգ կամ 20 մգ)

Պացիենտի հուշաթերթը պատրաստվել է ռիսկերի նվազեցման միջոցառումների  
շրջանակներում և չի հանդիսանում գովազդային նյութ:

Հուշաթերթը հաստատված է ՀՀ ԱՆ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների  
փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից





## Ի՞նչ է նախասրտերի ֆիբրիլացիան

**Նախասրտերի ֆիբրիլացիան** կամ շողացող առիթմիան հանդիսանում է սրտի ռիթմի ամենահաճախ հանդիպող խանգարումը: Սովորաբար նախասրտերի ֆիբրիլյացիայի նոպան ուղեկցվում է արագացված սրտխափոցով, սրտի աշխատանքի ընդհատումներով, կրծքավանդակի շրջանում անհանգստության և օդի պակասի զգացողությամբ, սակայն որոշ դեպքերում այն կարող է որևէ կերպ չարտահայտվել: Նման իրավիճակներում անհավասար զարկը կարող է հայտնաբերվել պատահականորեն՝ ձեռքի դաստակին զարկը շոշափելիս, իսկ որոշ դեպքերում դրա մասին կարող են հուշել զարկերակային ճնշումը չափող սարք (տոնոմետրը) կամ «խելացի» ժամացույցը: Բժիշկը կարող է հայտնաբերել նախասրտերի ֆիբրիլյացիան սիրտը լսելով ֆոնենդոսկոպով՝ այլ պատճառներով



Խորհուրդ է տրվում պարբերաբար գնահատել զարկը 75 տարեկանից բարձր անձանց մոտ, քանի որ նախասրտերի ֆիբրիլյացիայի ռիսկը բարձրանում է այդ տարիքում, ինչպես նաև զարկերակային գերճնշումով, սրտային անբավարարությամբ կամ շաքարային դիաբետով տառապող պացիենտների մոտ:

զննման ժամանակ կամ էլեկտրասրտագրություն (ԷՍԳ) կատարելիս:



## Ինչով է վտանգավոր նախասրտերի ֆիբրիլացիան

**Թրոմբերի առաջացումը** (արյան մակարդուկներ) հանդիսանում են ֆիբրիլյացիայի վտանգավոր բարդություն և կարող են հանգեցնել կաթվածի: Նախասրտերի ֆիբրիլյացիայի դեպքում անկանոն և անհամաչափ սրտի ռիթմը կարող է նպաստել արյան կուտակմանը սրտի վերին խոռոչներում (նախասրտերում) և արյան մակարդուկների (թրոմբերի) առաջացմանը: Եթե թրոմբի մի մասը պոկվի, այն կարող է արյունատար անոթներով հասնել գլխուղեղ: Պոկված թրոմբը կարող է խանգարել կամ ամբողջությամբ փակել գլխուղեղի անոթներում արյան հոսքը և դառնալ կաթվածի պատճառ:



Նախասրտերի ֆիբրիլացիան մեծացնում է կաթվածի և դրա հետ կապված մահացության վտանգը, ինչպես նաև հանգեցնում է սրտային անբավարարության վատթարացման և հոսպիտալացման մակարդակի բարձրացմանը:



## Ինչ է խորանիստ երակների թրոմբոզը և թոքային զարկերերակի թրոմբոէմբոլիան

**Խորանիստ երակների թրոմբոզը** (ԽԵԹ) հիվանդություն է, որի ժամանակ թրոմբը (արյան մակարդուկը) առաջանում է ստորին վերջույթների խորանիստ երակներում.

Խորանիստ երակների թրոմբոզ կարող է առաջանալ.

- Ստորին վերջույթների խոշոր օրթոպեդիկ վիրահատություններից հետո, որին է պատկանում ծնկային և ազդրային հոդի էնդոպրոթեզավորումը,
- ազդրի և ծնկի ոսկրերի կոտրվածքի հետ կապված վիրահատություններից հետո,
- տարբեր հիվանդությունների պատճառով երկարատև պառկած դիրքում գտնվելիս
- արյան մակարդելիության բնականոն ընթացքի խանգարման դեպքում

Արյան հոսքի խանգարման պատճառով խորանիստ երակների թրոմբոզը կարող է դրսևորվել այտուցով, ցավով, մաշկի գույնի փոփոխությամբ, սակայն հիվանդությունը կարող է անցնել նաև առանց ախտանշանների:

Եթե թրոմբի մի մասը (արյան մակարդուկ) ոտքի խորանիստ երակներից պոկվում է և անցնում սրտով դեպի թոքեր, ապա թրոմբը կարող է հասնել թոքերի արյան անոթներին և խցանել դրանք: Թոքերի արյունատար անոթների խցանումը առաջացնում է թոքերի արյան մատակարարման խանգարում և կարևոր նշանակություն ունի շնչառության և արյան շրջանառության համար: Այս հիվանդությունը կոչվում է **Թոքային զարկերակի թրոմբոէմբոլիա** (ԹԶԹ):

Արյան խտության նվազեցման համար բժիշկը կարող է նշանակել հատուկ դեղեր՝ հակակոագուլյանտներ, որոնք կարող են.

- կանխարգելել ստորին վերջույթների խորանիստ երակներում թրոմբերի ձևավորումը,
- նվազեցնել արդեն գոյություն ունեցող թրոմբերի չափսերը,
- կանխարգելել թոքային զարկերակի թրոմբոէմբոլիան (թրոմբի պոկում և այն արյան հոսքի միջոցով տեղափոխում թոքային զարկերակ),
- նվազեցնել ախտանշանների դրսևորման ուժգնությունը,
- կանխարգելել բարդությունների զարգացումը



## Թրոմբերի առաջացման կանխարգելում

Սրտում, ստորին վերջույթների խորանիստ երակներում **թրոմբերի առաջացման կանխարգելման** նպատակով բժիշկը կարող է նշանակել հատուկ դեղեր՝ հակակոագուլյանտեր։ Այս դեղերը կիջեցնեն թրոմբագոյացումը, որը կիջեցնի կաթվածի, թոքային զարկերակի թրոմբոէմբոլիայի և հիվանդությունների այլ լուրջ բարդությունների առաջացման ռիսկի հավանականությունը։

Այնպիսի դեղերի կիրառումը, ինչպիսին է ռիվարոքսաբանը (Զսիլտեսս®), կարող է զգալի իջեցնել անոթներում թրոմբի առկայությամբ պայմանավորված բարդությունների առաջացման վտանգը։



## Ինչ պետք է իմանալ Զսիլտեսս® դեղի մասին

- Զսիլտեսս® դեղը նոսրացնում է արյունը, որը կանխում է վտանգավոր թրոմբերի առաջացումը։
- Զսիլտեսս®-ը պետք է ընդունել միայն բժշկի ցուցումով։ Թրոմբերի առաջացումից լավագույն պաշտպանությունն ապահովելու համար **երբեք բաց մի թողեք դեղի ընդունումը**։
- Դուք չպետք է դադարեցնեք Զսիլտեսս®-ի ընդունումը՝ առանց Ձեր բժշկի հետ խորհրդակցելու, քանի որ դա կարող է բարձրացնել թրոմբերի առաջացման վտանգը։
- Մինչ Զսիլտեսս®-ի կիրառումը, տեղեկացրեք բժշկին բոլոր դեղերի մասին, որոնք այս պահին ընդունում եք, ընդունել եք վերջերս կամ նախատեսում եք ընդունել։
- Ցանկացած վիրաբուժական վիրահատությունից կամ ինվազիվ միջամտությունից առաջ տեղեկացրեք բժշկին, որ ընդունում եք Զսիլտեսս®։

## Ինչպես պետք է ընդունենք Քսիլտեսս®

Լավագույն պաշտպանություն ապահովելու համար Քսիլտեսս® պետք է ընդունել՝

դեղաչափ



Անկախ սննդի  
ընդունումից

դեղաչափ



Անկախ սննդի  
ընդունումից



ուտելու  
ընթացքում



ուտելու  
ընթացքում

- ▶ Այս հուշաթերթը միշտ պահեք ձեզ մոտ
- ▶ Ցույց տվեք այս թերթիկը բոլոր բժիշկներին, ներառյալ ատամնաբույժներին, Նախքան բուժումը սկսելը

Ես ստանում եմ հակամակարդիչ թերապիա, ըստ բժշկի ցուցման (ստուգեք ըստ անհրաժեշտության)

|                                                          |                                                         |
|----------------------------------------------------------|---------------------------------------------------------|
| <input type="checkbox"/> Քսիլտեսս® (դիվարոքսաբան) 2,5 մգ | <input type="checkbox"/> Քսիլտեսս® (դիվարոքսաբան) 15 մգ |
| <input type="checkbox"/> Քսիլտեսս® (դիվարոքսաբան) 10 մգ  | <input type="checkbox"/> Քսիլտեսս® (դիվարոքսաբան) 20 մգ |

ԱԱՀ: \_\_\_\_\_

Հասցե: \_\_\_\_\_

Ծննդյան օր: \_\_\_\_\_

Մարմնի քաշ: \_\_\_\_\_

Այլ դեղեր/հիվանդություններ: \_\_\_\_\_

**Արտակարգ իրավիճակների դեպքում դուք պետք է տեղեկացնեք**

Բժշկի ԱԱՀ: \_\_\_\_\_

Բժշկի հեռ. համար: \_\_\_\_\_

Բաժանմունքի: \_\_\_\_\_

**Խնդրում ենք նաև հայտնել արտակարգ իրավիճակի մասին**

ԱԱՀ: \_\_\_\_\_

Հեռ. համար: \_\_\_\_\_

Ազգակցական կապ \_\_\_\_\_

**Բժիշկների  
համար**

Պետք չէ առաջնորդվել ՄՀՆ արժեքներով, քանի որ դրանք՝ դիվարոքսաբանով (Քսիլտեսս) թերապիայի հակամակարդիչ ակտիվության հուսալի ցուցանիշ չեն

## Որ դեպքում պետք է դիմենք բժշկի

Արյան խտությունը նվազեցնող դեղերով բուժման ընթացքում, ինչպիսին է Զսիլտեսս®-ը, կարևոր է տեղյակ լինել հնարավոր կողմնակի ազդեցությունների մասին: Արյունահոսությունը առավել հաճախ հանդիպող կողմնակի ազդեցությունն է: Մի սկսեք Զսիլտեսս® ընդունել առանց ձեր բժշկի հետ խորհրդակցելու, եթե գիտեք, որ կա արյունահոսության վտանգ: Անհապաղ տեղեկացրեք ձեր բժշկին, եթե ունեք արյունահոսության ցանկացած ախտանիշ ինչպիսիք են

- Ցավ
- Այտուց կամ անհարմարավետության զգացում
- Գլխացավ, գլխապտույտ կամ թուլություն
- Կապտուկներ, քթային արյունահոսություն, լնդերի արյունահոսություն, վնասվածքներից արյունահոսություն, որոնք տևում են սովորականից երկար
- Սովորականից ավել առատ դաշտան կամ արյունային արտադրություն հեշտոցից
- Արյուն մեզում, որը կարող է այն ներկել վարդագույն կամ շագանակագույն ,
- արյունոտ կամ սև կղանք
- Հազ կամ արյունային փսխում կամ «սուրճի մրուրի» նման փսխում



Նշումների համար

---

---

---

---

---

---

---

---

---

---

Եթե Զսիլտեսս դեղի (ռիվարոքսաբան) ընդունումից ձեզ մոտ  
ամառացել են կողմնակի ազդեցություններ, խնդրում  
ենք այդ մասին հայտնել «Էգիս դեղագործական  
գործարան» ՓԲԸ հայաստանյան ներկայացուցչություն  
ձեզ առավել հարմար եղանակով՝

Email: [info@egis.am](mailto:info@egis.am)

Հեռ: 010-57-45-09

Կարող եք նաև հայտնել ՀՀ ԱՆ «Դեղերի եւ բժշկական  
տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ

Թեժ գծի հեռախոսահամարներ՝

+374 10 20 05 05, +374 96 22 05 05:

Էլ. փոստ՝ [vigilance@pharm.am](mailto:vigilance@pharm.am)

